

Արձանագրություն №8/2017-2018

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2018թ. հունիսի 28-ին տեղի ունեցած թիվ 8 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 72-ը (յոթանասուններկու):

Նիստը նախագահում էր ռեկտոր Ա. Ն. Միմոնյանը:

Ռեկտոր Ա. Ն. Միմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. Պրոֆեսորի, դոցենտի գիտական կոչումների շնորհում (զեկ.՝ գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովների նախագահներ Ն. Ն. Մարտիրոսյան, Խ. Վ. Ներկարարյան):
2. Ամբիոնի վարիչի, պրոֆեսորադասախոսական համակազմի պաշտոնների ընտրության վերաբերյալ ֆակուլտետային գիտական խորհուրդների ընդունած որոշումների հաստատում (զեկ.՝ գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովների նախագահներ Ն. Ն. Մարտիրոսյան, Խ. Վ. Ներկարարյան):
3. Դեկանի ընտրության վերաբերյալ ֆակուլտետային գիտական խորհուրդների ընդունած որոշումների հաստատում (զեկ.՝ գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովների նախագահներ Ն. Ն. Մարտիրոսյան, Խ. Վ. Ներկարարյան):
4. Մագիստրատուրայի կրթական ծրագրերի հաստատում (զեկ.՝ ԵՊՀ գիտխորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողովի նախագահ Է. Ս. Գևորգյան):
5. ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (զեկ.՝ պրոռեկտոր Գ. Գ. Գևորգյան):
6. Հաղորդում 2018-2019 ուստարվա ԵՊՀ առկա ուսուցման համակարգի ընդունելության մասին (զեկ.՝ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան)
7. «ԵՊՀ հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչություն» կառուցվածքային ստորաբաժանումը լուծարելու և «ԵՊՀ հանրային կապերի ծառայություն» կառուցվածքային ստորաբաժանում ստեղծելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկ ներկայացնելու մասին (զեկ.՝ հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության պետ Գ. Գ. Էմին-Տերյան):
8. Ընթացիկ հարցեր
 - 8.1. Ռադիոֆիզիկայի ֆակուլտետը և ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնը անվանափոխելու, ալիքային պրոցեսների տեսության և ֆիզիկայի ու բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնները վերակազմակերպելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկ ներկայացնելու մասին:
 - 8.2. «Ռեզիդնալ երկրաբանության, պետրոլոգիայի և օգտակար հանածոների» և «Օգտակար հանածոների որոնման և հետախուզման» ամբիոնների միավորման եղանակով «Ռեզիդնալ երկրաբանության և օգտակար հանածոների» ամբիոնի վերակազմակերպելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկ ներկայացնելու մասին:
 - 8.3. «Քաղաքականության վերլուծության ԵՊՀ կենտրոն» հետազոտական կառուցվածքային ստորաբաժանում ստեղծելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկ ներկայացնելու մասին:
 - 8.4. Դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի դոցենտ Անահիտ Աբրահամյանի և ասիստենտ Արմենուհի Մարտիրոսյանի «English for future diplomats» վերնագրով աշխատանքը հրատարակության երաշխավորելու և այն որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳ նախարարությանը միջնորդելու մասին:

8.5. Միջուկային ֆիզիկայի ամբիոնի վարիչ Անահիտ Բալաբեկյանի «Միջուկային փոխազդեցություններ» վերնագրով աշխատանքը հրատարակության երաշխավորելու և այն որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳ նախարարությանը միջնորդելու մասին:

8.6. Իրավագիտության ֆակուլտետում մեկանգամյա անվանական կրթաթոշակ սահմանելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Լսեցին. –

1. Պրոֆեսորի, դոցենտի գիտական կոչումների շնորհելու մասին,
2. Ամբիոնի վարիչի, պրոֆեսորադասախոսական համակազմի պաշտոնների ընտրության վերաբերյալ ֆակուլտետային գիտական խորհուրդների ընդունած որոշումները հաստատելու մասին,
3. Դեկանի ընտրության վերաբերյալ ֆակուլտետային գիտական խորհուրդների ընդունած որոշումները հաստատելու մասին:

Գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովների նախագահներ Ն. Մարտիրոսյանը և Խ. Ներկարարյանը ներկայացրեցին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ հայցող, ամբիոնի վարիչի, պրոֆեսորադասախոսական կազմի և ֆակուլտետի դեկանի պաշտոնի հավակնող աշխատակիցների գործունեության վերաբերյալ համառոտ տվյալներ:

Պրոֆեսորի կոչման հավակնում էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	Բաբաջանյան Արսեն Ժորայի	ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնի դոցենտ
2.	Ավետիսյան Կարեն Լարիկի	Ընդհանուր մաթեմատիկայի ամբիոնի վարիչ

Դոցենտի կոչման հավակնում էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	Սարգսյան Լիանա Սամվելի	Հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ
2.	Քամայան Արևիկ Սերգեյի	Հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ
3.	Մովսիսյան Անահիտ Ժորայի	Հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ
4.	Մալխասյան Միքայել Արմենի	Հայոց պատմության ամբիոնի ասիստենտ
5.	Նազարյան Հայկ Զավենի	Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի ասիստենտ
6.	Մարգարյան Ելիզավետա Գրիշայի	Անգլերեն լեզվի թիվ 1 ամբիոնի դասախոս
7.	Մկրտումյան Գայանե Սերգեյի	Արաբագիտության ամբիոնի ասիստենտ
8.	Պապով Գեորգի Յուրիի	Կենդանաբանության ամբիոնի ասիստենտ
9.	Ղազարյան Աստղիկ Սամվելի	Կենդանաբանության ամբիոնի ասիստենտ

Ամբիոնի վարիչի պաշտոնի հավակնում էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	Հակոբյան Լևոն Գեորգիի	Ռուս գրականության ամբիոնի վարիչ

2.	Այվազյան Վարդան Նորիկի	Մահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ
3.	Զաքարյան Սելյան Արտուշայի	Փիլիսոփայության պատմության ամբիոնի վարիչ
4.	Ավանեսյան Հրանտ Միքայելի	Ընդհանուր հոգեբանության ամբիոնի վարիչ
5.	Օհանյան Վիկտոր Կարոյի	Հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության ամբիոնի վարիչ
6.	Դիլբանդյան Սամվել Ադվանի	Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ
7.	Վարդևանյան Պողոս Հովհաննեսի	Կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ
8.	Ավետիսյան Վահրամ Դավիթի	Քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ
9.	Հարությունյան Նազիկ Կարապետի	Մանկավարժության ամբիոնի վարիչ
10.	Հովհաննիսյան Վահե Վաղինակի	Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ
11.	Ավետիսյան Հայկ Գրիգորի	Հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ
12.	Խոջումյան Բելլա Սուրենի	Ռուսաց լեզվի /բնագիտական ֆակուլտետների/ ամբիոնի վարիչ
13.	Ղազարյան Ռուզան Ռաֆայելի	Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչ
14.	Վերմիշյան Հարություն Ռաֆիկի	Սոցիոլոգիայի տեսության և պատմության ամբիոնի վարիչ
15.	Պարոնյան Շուշանիկ Հարությունի	Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի վարիչ
16.	Պետրոսյան Վարդան Զորիկի	Ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ
17.	Բաղդասարյան Հասմիկ Գրիգորի	Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ
18.	Նանագյուլյան Սիրանուշ Գերասիմի	Բուսաբանության և սնկաբանության ամբիոնի վարիչ
19.	Գաբրիելյան Յուրիկ Միշայի	Գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ
20.	Սարգսյան Սամվել Վլադիմիրի	Մեխանիկայի ամբիոնի վարիչ
21.	Խաչատրյան Արտակ Կարապետի	Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ
22.	Աթաբեկյան Վարուժան Սերյոժայի	Հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի վարիչ
23.	Երզնկյան Ելենա Լևոնի	Անգլերեն լեզվի թիվ 2 ամբիոնի վարիչ
24.	Պետրոսյան Դավիթ Վլադիմիրի	Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի վարիչ
25.	Հովսեփյան Մուշեղ Մայիսի	Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի վարիչ
26.	Վաղարշյան Արթուր Գրիշայի	Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ
27.	Ավետիսյան Յուրիկ Սրապիոնի	Հայոց լեզվի ամբիոնի վարիչ
28.	Խաչատրյան Նարինե Գագիկի	Անձի հոգեբանության ամբիոնի վարիչ
29.	Ենգոյան Աշոտ Փայլակի	Քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի վարիչ
30.	Մարտիրյան Արմեն Իգնատիոսի	Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ
31.	Պետրոսյան Վահրամ Սամվելի	Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի վարիչ

Պրոֆեսորի պաշտոնի հավակնում էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	Վարդանյան Վահրամ Պանդուխտի	Երկրաֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր
2.	Գրծեյան Ռուզան Ռուբենի	Ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի պրոֆեսոր
3.	Հարությունյան Վերոնիկա Նիկիտայի	Ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի պրոֆեսոր
4.	Խաչիկյան Հարություն Մարտինի	Քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր
5.	Ենգիբարյան Վահե Գուրգենի	Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի պրոֆեսոր
6.	Զասյավսկայա Մարիա Իգորի	Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր
7.	Սարիբեկյան Ամալյա Սարիբեկի	Կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսոր
8.	Դավոյան Սամսոն Աշոտի	Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի պրոֆեսոր
9.	Հայկյանց Արմեն Մերուժանի	Քաղաքացիական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր

Ֆակուլտետի դեկանի պաշտոնի հավակնում էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
2.	Ավագյան Արծրուն Աբգարի	Հայ բանասիրության ֆակուլտետի դեկան
1.	Դումանյան Վահրամ Ժորայի	Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան
2.	Մկրտիչյան Արթուր Երվանդի	Սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան
3.	Սարգսյան Հայկ Լևոնի	Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան

Կազմվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

1. Ռուլանդ Ավագյան,
2. Իշխան Վարդանյան,
3. Պարույր Վարդերեսյան,
4. Ամալյա Մողումոնյան,
5. Միշա Սարգսյան:

Տեղի ունեցավ փակ, գաղտնի քվեարկություն: Քվեարկությանը մասնակցեցին 71 հոգի: Արդյունքները հրապարակվեցին հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ռ. Ավագյանի կողմից:

Պրոֆեսորի կոչում շնորհելու համար անցկացված քվեարկության արդյունքներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Բաբաջանյան Արսեն Ժորայի	67	1	3
2.	Ավետիսյան Կարեն Լարիկի	67	1	3

Դոցենտի կոչում շնորհելու համար անցկացված քվեարկության արդյունքներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Սարգսյան Լիանա Սամվելի	70	1	0

2.	Քամալյան Արևիկ Սերգեյի	69	2	0
3.	Մովսիսյան Անահիդա Ժորայի	69	2	0
4.	Մալխասյան Միքայել Արմենի	70	1	0
5.	Նազարյան Հայկ Զավենի	70	1	0
6.	Մարգարյան Ելիզավետա Գրիշայի	70	1	0
7.	Մկրտումյան Գայանե Սերգեյի	70	1	0
8.	Պապով Գեորգի Յուրիի	70	1	0
9.	Ղազարյան Աստղիկ Սամվելի	70	1	0

Ամբիոնի վարիչի պաշտոնի համար անցկացված քվեարկության արդյունքներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Հակոբյան Լևոն Գեորգիի	71	0	0
2.	Այվազյան Վարդան Նորիկի	68	3	0
3.	Զաքարյան Սեյրան Արտուշայի	70	1	0
4.	Ավանեսյան Հրանտ Միքայելի	69	2	0
5.	Օհանյան Վիկտոր Կարոյի	70	1	0
6.	Դիրանոյան Սամվել Աղվանի	69	2	0
7.	Վարդանյան Պողոս Հովհաննեսի	70	1	0
8.	Ավետիսյան Վահրամ Դավիթի	68	3	0
9.	Հարությունյան Նազիկ Կարապետի	67	4	0
10.	Հովհաննիսյան Վահե Վաղինակի	70	1	0
11.	Ավետիսյան Հայկ Գրիգորի	70	1	0
12.	Խոջումյան Բելլա Սուրենի	69	2	0
13.	Ղազարյան Ռուզան Ռաֆայելի	70	1	0
14.	Վերմիշյան Հարություն Ռաֆիկի	71	0	0
15.	Պարոնյան Շուշանիկ Հարությունի	69	2	0
16.	Պետրոսյան Վարդան Զորիկի	69	2	0
17.	Բաղդասարյան Հասմիկ Գրիգորի	70	1	0
18.	Նանագյուլյան Սիրանուշ Գերասիմի	68	3	0

19.	Գաբրիելյան Յուրիկ Միշայի	67	4	0
20.	Սարգսյան Սամվել Վլադիմիրի	68	3	0
21.	Խաչատրյան Արտակ Կարապետի	71	0	0
22.	Աթաբեկյան Վարուժան Սերյոժայի	70	1	0
23.	Երզնկյան Ելենա Լևոնի	69	2	0
24.	Պետրոսյան Դավիթ Վլադիմիրի	69	2	0
25.	Հովսեփյան Մուշեղ Մայիսի	69	2	0
26.	Վաղարշյան Արթուր Գրիշայի	69	2	0
27.	Ավետիսյան Յուրիկ Սրապիոնի	69	2	0
28.	Խաչատրյան Նարինե Գագիկի	69	2	0
29.	Ենգոյան Աշոտ Փայլակի	70	1	0
30.	Մարտիրյան Արմեն Իգնատիոսի	70	1	0
31.	Պետրոսյան Վահրամ Սամվելի	69	2	0

Պրոֆեսորի պաշտոնի համար անցկացված քվեարկության արդյունքներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Վարդանյան Վահրամ Պանդուխտի	68	3	0
2.	Գրձելյան Ռուզան Ռուբենի	70	1	0
3.	Հարությունյան Վերոնիկա Նիկիտայի	70	1	0
4.	Խաչիկյան Հարություն Մարտինի	69	2	0
5.	Ենգիֆարյան Վահե Գուրգենի	70	1	0
6.	Զասլավսկայա Մարիա Իգորի	70	1	0
7.	Սարիբեկյան Ամալյա Սարիբեկի	68	3	0
8.	Դավոյան Սամսոն Աշոտի	65	6	0
9.	Հայկյանց Արմեն Մերուժանի	67	4	0

Դեկանի պաշտոնի համար անցկացված քվեարկության արդյունքներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Ավագյան Արծրուն Արգարի	45	25	1

2.	Դումանյան Վահրամ Ժորայի	60	11	0
3.	Մկրտիչյան Արթուր Երվանդի	67	4	0
4.	Սարգսյան Հայկ Լևոնի	53	17	1

Որոշեցին.

1. Դիմել ՀՀ կրթության և գիտության նախարարության բարձրագույն որակավորման կոմիտե՝ պրոֆեսորի և դոցենտի կոչում շնորհելու վերաբերյալ ԵՊՀ գիտական խորհրդի որոշումը հաստատելու միջնորդությամբ:
 2. Հաստատել վերոնշյալ պրոֆեսորների և դոցենտների՝ ամբիոնի վարիչ ընտրվելու վերաբերյալ ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների գիտական խորհուրդների որոշումները և ընտրված ամբիոնի վարիչների հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:
 3. Հաստատել վերոնշյալ աշխատակիցների՝ պրոֆեսորի պաշտոնում ընտրվելու վերաբերյալ ԵՊՀ ֆակուլտետների գիտական խորհուրդների որոշումները և ընտրված պրոֆեսորների հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ համաձայն ընթացակարգի 33-րդ կետի:
 4. Հաստատել ԵՊՀ վերոնշյալ աշխատակիցների՝ ֆակուլտետի դեկան ընտրվելու վերաբերյալ ԵՊՀ ֆակուլտետների գիտական խորհուրդների որոշումները և ընտրված դեկանների հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:
3. **Լսեցին.** – Մագիստրատուրայի նոր կրթական ծրագրերի հաստատման մասին: ԵՊՀ գիտխորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողովի նախագահ Է. Ս. Գևորգյանը գիտական խորհրդի հաստատմանը ներկայացրեց Երևանի պետական համալսարանի մագիստրոսի ներքոնշյալ կրթական ծրագրերը՝ նշելով, որ դրանք անցել են ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգով պահանջվող բոլոր անհրաժեշտ փուլերը.
1. Բանկային գործունեության կազմակերպում (տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում),
 2. Հաշվապահական հաշվառում և աուդիտ (տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում),
 3. Կիրառական վիճակագրություն և տվյալների վերլուծություն (մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում)
 4. Կիրառական մանրէաբանություն (կենսաբանության ֆակուլտետում):

Որոշեցին. – հաստատել մագիստրատուրայի վերոնշյալ ծրագրերը:

4. **Լսեցին.** - ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը նոր խմբագրությամբ հաստատելու մասին: Պրոռեկտոր Գ. Գևորգյանը ընդհանուր գծերով ներկայացրեց կարգի դրույթները: Ռեկտոր Ա. Սիմոնյանն առաջարկեց քվեարկությամբ հաստատել կարգը՝ նոր խմբագրությամբ:

Որոշեցին. –

1. Հաստատել «Երևանի պետական համալսարանի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը (նոր խմբագրությամբ)»՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ գիտական խորհրդի 2017թ. դեկտեմբերի 21-ի թիվ 3/5 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարանի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը»:
3. Սահմանել, որ սույն որոշմամբ հաստատված կարգի դրույթները տարածվում են 2017թ. սեպտեմբերի 1-ից հետո կատարված աշխատանքների վրա:

5. **Լսեցին.** - Հաղորդում 2018-2019 ուստարվա ԵՊՀ առկա ուսուցման համակարգի ընդունելության մասին: Պրոռեկտոր Ա. Գրիգորյանը ներկայացրեց ԵՊՀ բակալավրիատի ընդունելության դիմորդների թիվն ըստ մասնագիտությունների: Ընդհանուր առմամբ համալսարան են դիմել 1519 դիմորդ՝ 52 մասնագիտությունների համար: Դիմորդների սակավությունը Ա. Գրիգորյանը բացատրեց միջնակարգ դպրոցում ժամանակին տեղի ունեցած փոփոխության հետ, որը հանգեցրել էր դասարանների կոմպլեկտավորման և մի դասարանում ուսանողների թվի նվազման: Ա. Գրիգորյանը ներկայացրեց նաև դիմորդների ընդհանուր թիվը հանրապետությունում՝ ըստ բուհերի: Համալսարանի մասնաբաժինն ընդհանուր թվի մեջ կազմել է 1/3-ը:

Որոշեցին. – Ա. Գրիգորյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

6. **Լսեցին.** - «ԵՊՀ հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչություն» կառուցվածքային ստորաբաժանումը լուծարելու և «ԵՊՀ հանրային կապերի ծառայություն» կառուցվածքային ստորաբաժանում ստեղծելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկ ներկայացնելու մասին: Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության պետ Գ. Էմին-Տերյանը նշված փոփոխությունների անհրաժեշտությունը բացատրեց այն հանգամանքով, որ ներկայում վարչության գործառույթներն առավել ընդգրկուն են դարձել և որ վարչության անվանումը, կազմակերպական կարգավիճակը չեն կարող բավարարել գիտական խորհրդի՝ 2017թ. հուլիսի 6-ի նիստում ընդունված՝ Հանրային կապերի զարգացման հայեցակարգի պահանջները:

Որոշեցին. –

1. Առաջարկել Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդին՝ լուծարել (գործունեությունը դադարեցնել) Երևանի պետական համալսարանի «Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչություն» կառուցվածքային ստորաբաժանումը:
2. Առաջարկել Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդին՝ ստեղծել Երևանի պետական համալսարանի «Հանրային կապերի ծառայություն» կառուցվածքային ստորաբաժանումը:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ.

1. **Լսեցին** - Ռադիոֆիզիկայի ֆակուլտետը և ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնը անվանափոխելու, այլքային պրոցեսների տեսության և ֆիզիկայի ու բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնները վերակազմակերպելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկ ներկայացնելու մասին: Ֆակուլտետի դեկան Խ. Ներկարարյանը նշեց, որ հաշվի առնելով տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման առաջնահերթությունը հանրապետությունում, աշխարհի համալսարանների դրական փորձը և այդ ուղղությամբ

ռադիոֆիզիկայի ֆակուլտետում իրականացվող դասընթացների և գիտական հետազոտությունների ընդհանուր մասնաբաժինը, ֆակուլտետն առաջարկում է կատարել վերոնշյալ անվանափոխություններն ու կազմակերպական կարգավիճակների փոփոխությունները:

Որոշեցին. –

- Առաջարկել Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդին՝ լուծարել (գործունեությունը դադարեցնել) Երևանի պետական համալսարանի ռադիոֆիզիկայի ֆակուլտետի «Ալիքային պրոցեսների տեսության և ֆիզիկայի ամբիոն» և «Բարձրագույն մաթեմատիկայի ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումները:
- Առաջարկել Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդին՝ Երևանի պետական համալսարանի ռադիոֆիզիկայի ֆակուլտետում ստեղծել «Կիրառական էլեկտրադինամիկայի և մոդելավորման ամբիոն» և «Հեռահաղորդակցության և ազդանշանների մշակման ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումները:
- «Երևանի պետական համալսարանի գերբարձր հաճախությունների ռադիոֆիզիկայի ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումը վերանվանել «Երևանի պետական համալսարանի ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ամբիոն»:

2. Լսեցին. - «Ռեգիոնալ երկրաբանության, պետրոլոգիայի և օգտակար հանածոների» և «Օգտակար հանածոների որոնման և հետախուզման» ամբիոնների միավորման եղանակով «Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների» ամբիոնի վերակազմակերպելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկ ներկայացնելու մասին: Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Մ. Գրիգորյանը նշեց, որ էլնելով ֆակուլտետի «Ռեգիոնալ երկրաբանության, պետրոլոգիայի և օգտակար հանածոների» և «Օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման» ամբիոնների ներկայիս ուսումնական բեռնվածություններից, ինչպես նաև յուրաքանչյուր ամբիոնում դասախոսական հաստիքների թվի կրճատումից՝ երկու ամբիոնում էլ հնարավորություն չի ստեղծվում արդյունավետ կազմակերպելու տվյալ մասնագիտություններով ուսումնական գործընթացը: Ուստի ֆակուլտետի գիտական խորհուրդն առաջարկում է միավորել նշված երկու ամբիոնները և ստեղծել նոր՝ «Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման» ամբիոն:

Որոշեցին. - Առաջարկել Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդին՝ Երևանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի «Ռեգիոնալ երկրաբանության, պետրոլոգիայի և օգտակար հանածոների ամբիոն» և «Օգտակար հանածոների որոնման և հետախուզման ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումները միաձուլման ձևով վերակազմակերպել Երևանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի «Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանման:

3. Լսեցին. - «Քաղաքականության վերլուծության ԵՊՀ կենտրոն» հետազոտական կառուցվածքային ստորաբաժանում ստեղծելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկ ներկայացնելու մասին: Ռեկտոր Ա. Միմոնյանն ասաց, որ սոցիալական մասնագիտությունների մի խումբ դասախոսներ են ներկայացնում սույն առաջարկությունը, ըստ որի Քաղաքականության վերլուծության ԵՊՀ կենտրոնի ստեղծումը կոչված է լինելու հնարավորինս նպաստելու հետևյալ խնդիրների լուծմանը.

- Սոցիալական որոշ գիտությունների շատ մասնագետներ աշխուժորեն ներգրավված չեն միջազգային հետազոտական դրամաշնորհային ծրագրերում,
- ԵՊՀ-ում սոցիալական որոշ գիտությունների մասով սահմանված չեն գիտական հետազոտության գերակայություններ, գերակա ուղղություններ, իրականացվող

հետազոտությունները միմյանցից կտրված են, պայմանավորված են անհատների գիտահետազոտական նախընտրություններով ու ճաշակով,

- Սոցիալական գիտությունների գծով կիրառական, միջգիտակարգային հետազոտությունները՝ նվիրված, մասնավորապես, կենսագործունեության տարբեր ոլորտներում տարվող քաղաքականության ուսումնասիրությանը, խիստ սակավ են,
- Երբեմն թույլ է կապը պետության, պետական, քաղաքական համակարգի կառույցների հետ. կապն այն իմաստով, որ ԵՊՀ մասնագետները կարող են իրականացնել պետության, մեր երկրի հասարակական, քաղաքական այլ դերակատարների հետաքրքրություններն ու կարիքները պարունակող հետազոտություններ,
- ԵՊՀ-ում սոցիալական որոշ մասնագիտությունների պարագայում կտրված է կապը կրթության և հետազոտության միջև. հետազոտական գերակայությունների և պատվերների բացակայության պատճառով բազմաթիվ շնորհաշատ ուսանողներ կա՛մ չեն իրականացնում լուրջ հետազոտություններ, կա՛մ հետազոտական աշխատանքները /ավարտական աշխատանք, մագիստրոսական թեզ/ ընտրվում են զուտ սեփական հետաքրքրության կամ գիտական ղեկավարի կոմպետենցիայի հիման վրա:

Որոշեցին. - Առաջարկել Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդին՝ Երևանի պետական համալսարանում ստեղծել «Քաղաքականության վերլուծության կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումը:

4. Լսեցին. - Դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի ղոցենտ Անահիտ Աբրահամյանի և ասիստենտ Արմենուհի Մարտիրոսյանի «English for future diplomats» վերնագրով աշխատանքը հրատարակության երաշխավորելու և այն որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳ նախարարությանը միջնորդելու մասին: Ռեկտոր Ա. Սիմոնյանը տեղեկացրեց, որ նշված հարցում միջնորդություն է ներկայացրել միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհուրդը: Ռեկտոր Ա. Սիմոնյանը գիտխորհրդի անդամներին ներկայացրեց նաև աշխատանքի վերաբերյալ համալսարանական և արտահամալսարանական մասնագետների դրական կարծիքները:

Որոշեցին. -

- «English for future diplomats» վերնագրով աշխատանքը (հեղինակներ՝ ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի ղոցենտ Անահիտ Աբրահամյան, նույն ամբիոնի ասիստենտ Արմենուհի Մարտիրոսյան) երաշխավորել հրատարակության:
- Միջնորդել ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝ նշված աշխատանքը որպես բուհական դասագիրք ճանաչելու հարցում:

5. Լսեցին. - Միջուկային ֆիզիկայի ամբիոնի վարիչ Անահիտ Բալաբեկյանի «Միջուկային փոխազդեցություններ» վերնագրով աշխատանքը հրատարակության երաշխավորելու և այն որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳ նախարարությանը միջնորդելու մասին: Ա. Սիմոնյանը տեղեկացրեց, որ նշված հարցում միջնորդություն է ներկայացրել ֆիզիկայի ֆակուլտետի գիտական խորհուրդը: Ռեկտոր Ա. Սիմոնյանը գիտխորհրդի անդամներին ներկայացրեց նաև աշխատանքի վերաբերյալ համալսարանական և արտահամալսարանական մասնագետների դրական կարծիքները:

Որոշեցին. -

- «Միջուկային փոխազդեցություններ» վերնագրով աշխատանքը (հեղինակ՝ ԵՊՀ միջուկային ֆիզիկայի ամբիոնի վարիչ Անահիտ Բալաբեկյան) երաշխավորել հրատարակության:

- Միջնորդել ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝ նշված աշխատանքը որպես բուհական դասագիրք ճանաչելու հարցում:
6. Լսեցին. - Իրավագիտության ֆակուլտետում մեկանգամյա անվանական կրթաթոշակ սահմանելու մասին: Ֆակուլտետի դեկան Գ. Ղազինյանը նշեց, որ Համալսարանի մի խումբ ուսանողներ Նելսոն Մանդելայի անվան դատախազ-մրցույթի եզրափակիչ փուլ են անցել և Նյուրնբերգում կայանալիք մրցույթին մասնակցելու համար ուսանողներին և մարզչին ֆինանսական որոշ օժանդակություն ցույց տալու կապակցությամբ ֆակուլտետի գիտական խորհուրդն առաջարկում է ԵՊՀ-ի, ինչպես նաև «Ի-Էլ-Էլ Գործընկերություն» ՍՊԸ-ի կողմից սահմանված Յուրի Ղամբարյանի անվան կրթաթոշակի երեք տարիների հավելումներից ստացված միջոցների հաշվին ֆակուլտետում սահմանել մեկանգամյա կրթաթոշակներ:

Որոշեցին. –

1. Իրավագիտության ֆակուլտետում սահմանել 2017-2018 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի՝ Նելսոն Մանդելայի անվան միանվագ կրթաթոշակ (հարյուր հիսուն հազար դրամի չափով)՝ այն հատկացնելով իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի առկա ուսուցման համակարգի 4-րդ կուրսի ուսանող **Հարություն Դանիելի Հովհաննիսյանին**, միջազգային հարաբերությունների ֆակուլտետի մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգի 2-րդ կուրսի ուսանողուհի **Շողեր Գագիկի Սահակյանին** (յուրաքանչյուրին յոթանասունհինգ հազար դրամ):
2. Իրավագիտության ֆակուլտետում սահմանել 2017-2018 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի՝ «Լավագույն մարզիչ» միանվագ կրթաթոշակ (երկու հարյուր հազար դրամի չափով)՝ այն հատկացնելով եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի 1-ին տարվա ասպիրանտ **Գրիգոր Արմենի Չոբանյանին**:
3. Իրավագիտության ֆակուլտետում սահմանել 2017-2018 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի՝ «Միջազգային իրավունքի գծով դատախազ-մրցույթի հանրապետական փուլում հաղթող թիմ» միանվագ կրթաթոշակ (երկու հարյուր հազար դրամի չափով)՝ այն հատկացնելով իրավագիտության ֆակուլտետի ներքոնշյալ ուսանողներին (յուրաքանչյուրին քառասուն հազար դրամ).
 - **Տաթևիկ Արամի Սողոյան** – բակալավրիատի առկա ուսուցման համակարգի 4-րդ կուրս,
 - **Լարիսա Աշոտի Գևորգյան**– բակալավրիատի առկա ուսուցման համակարգի 4-րդ կուրս,
 - **Աղավնի Էդիկի Ավետիսյան**– բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրս,
 - **Զավեն Համբարձումի Վարտումյան** – բակալավրիատի առկա ուսուցման համակարգի 2-րդ կուրս,
 - **Լուսինե Տիգրանի Հովհաննիսյան**– բակալավրիատի առկա ուսուցման համակարգի 2-րդ կուրս:

Գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Հ. Միմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ. Ա. Սողոմոնյան

04.07.2018թ.